



**Կարգապահական գործ թիվ ԿԳ-16124**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2017 թվականի հունվարի 16-ի թիվ 11-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/8-Ա**

**ՓԱՍՏԱՔԱՆ ՌՈՒՔԵՆ ՉԻՔՈՒԽՉՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարեն Մեծլումյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Երվանդ Վարոսյանի, Կարեն Սարգսյանի, Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, Քննության առնելով փաստաբան Ռուբեն Չիբուխչյանին (արտոնագիր թիվ 760) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

**Պ Ա Ր Չ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2016թ-ին Պալատի նախագահի առաջին տեղակալին ներկայացվել է տեղեկանք, այն մասին, որ փաստաբան Ռուբեն Չիբուխչյանը (արտոնագիր թիվ 760) 2015թ. սեպտեմբերից մինչև 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով ունի 50.000 (հիստուն հազար) ՀՀ դրամ գումարի չկատարված պարտավորություն:

**2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Պալատի նախագահի առաջին տեղակալի 26.07.2016թ. թիվ 279-Ա/ԿԳ-16124 որոշմամբ փաստաբան Ռուբեն Չիբուխչյանի (արտոնագիր թիվ 760) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ՝ ԿԳ-16124):

Կարգապահական գործի արագացված կարգի համաձայն՝ սույն կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի հունվարի 26-ին ժամը 18:54-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ 12 սենյակ):

### **3. Պատասխանողի համառոտ բացատրությունը.**

Փաստաբան Ռուբեն Զիբուխյանը բացատրություն չի ներկայացրել:

### **4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- 1) Փաստաբան Ռուբեն Զիբուխյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 19.10.2007թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 12.12.2016թ. տրամադրված տեղեկանքով),
- 2) փաստաբան Ռուբեն Զիբուխյանը ունի 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված 2015թ. սեպտեմբերից մինչև 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2016թ. Պալատի նախագահի առաջին տեղակալին տրամադրված տեղեկանքով),
- 3) փաստաբան Ռուբեն Զիբուխյանը 2015թ. սեպտեմբերից մինչև 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի պարտքն ամբողջությամբ վճարել է (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.01.2017թ. տրամադրված տեղեկանքով):

### **5. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.**

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի 12.12.2016թ. տեղեկանքի համաձայն՝ Ռուբեն Զիբուխյանը փաստաբանական գործունեության թիվ 760 արտոնագիրը ստացել է 19.10.2007թ: Ռուբեն Զիբուխյանի նկատմամբ 2007-2016թթ ժամանակահատվածում 4 կարգապահական վարույթով կայացվել են որոշում և առկա է մեկ ընթացիք վարույթ՝

- Խորհրդի 19.05.2011թ. թիվ 10/3 և 18.04.2014թ. թիվ 58ԿԳ/1 որոշումներով Ռուբեն Զիբուխյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) կարճվել են:
- Խորհրդի 16.01.2015թ. թիվ ԿԳ/5-Ա և 16.10.2015թ. թիվ ԿԳ/157-Ա որոշումներով Ռուբեն Զիբուխյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ նկատողություն.

## **6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Ռուբեն Չիբուխչյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգի **(Նոր խմբագրությամբ)**» (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Կարգի 17-րդ կետի՝ «Առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: **Երկրորդ կամ հետագա ցանկացած անդամավճարը չվճարելու խախտման դեպքում՝ անկախ կարգապահական վարույթն հարուցելուց հետո պարտքի մարման հանգամանքից, կարգապահական վարույթն այդ հիմքով չի կարող կարճվել:**»:

Նշված Կարգը հաստատվել է 26.12.2013թ.-ին, ուստի 16-րդ և 17-րդ կետերում նշված ժամկետները պետք է հաշվարկել այդ ժամանակահատվածից սկսած:

Վերոնշյալ կանոնների վերլուծությունից հետևում է, որ երկրորդ կամ հետագա ցանկացած անդամավճարը չվճարելու խախտման դեպքում՝ անկախ կարգապահական վարույթն հարուցելուց հետո պարտքի մարման հանգամանքից, կարգապահական վարույթն այդ հիմքով չի կարող կարճվել:

Սույն դեպքում համաձայն 16.01.2017թ.-ին ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի տեղեկանքի Ռուբեն Չիբուխչյանը անդամավճարի գծով պարտքն ամբողջությամբ վճարել է: Սակայն, ՀՀ Փաստաբանների Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 05.10.2016թ.-ի տեղեկանքից հետևում է, որ

փաստաբան Ռուբեն Չիրուխյանի նկատմամբ նախկինում կիրառվել է Պալատի խորհրդի 26.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ Կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետը, ուստի Ռուբեն Չիրուխյանն ենթակա է պատասխանատվության:

Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ փաստաբանը վճարել է անդամավճարի գծով պարտքն ամբողջությամբ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝ Խորհուրդը

## **Ո Ր Ո Շ Ե Ց ՝**

**1. Փաստաբան Ռուբեն Չիրուխյանին (արտոնագիր թիվ 760) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:**

**2. Փաստաբան Ռուբեն Չիրուխյանի (արտոնագիր թիվ 760) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:**

**3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Ռուբեն Չիրուխյանին:**

**Ծանոթություն.** Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Կարեն Մեծլումյան